46. ԹԱ ՀՈՒՆՑ Ա ԿԸՆԵԳՅԸ ՄԱՐԹԻՆ ՀԸՐՈՒՍՏԸՑՐԱԼ

Իլա̈լ ա չիլա̈լ, մին շատ հարուստ մարթ ա իլա̈լ։ Էս հարուստ մարթը ․իրսակվալ ա թա չէ, առաշվա օրից կընգանը վըեննը եկալ չի, ամեն օր էս հարուստ մարթը վընաս ա ըրալ, ամեն օր մին փորցանքի մաչ ա ընգալ, մին օր պըրախողն ա տակ ըրալ, մին օր դավողն ա կըրակ ընդալ, մին օր խազնան կըտրալ, վերշը էն օրն ա ընգալ, վեր տըրեսալ ա, հացու փող էլ չի ինիլու, մըտածալ ա, մտածալ, վեր կընգանը քշտեն սըվիրես չի մընա, կողի կընդանն էլ շատ սիրելիս ա իլա̈լ, ասալ ա. «Ա՛ կընեգյ, տըեսնըմ ըմ. վեր կործերս թա̈րս ա քյինըմ, տու էքյուծ քյինի քու հարա̈նց տոն, տըեսնամ ես հինչ ըմ անըմ, համոթ ա, վեր քյըզնըման կընգանը կարըմ չըմ պահիմ»։

Կընեգյը դյիդա̈լիս ա իլա̈լ մարթին քյանբախտոթութունը, վեր ո̈ւրա̈ն կյալա̈ն ետն ա լոխ պըտահալ, ասալ ա. «Ա՛ մարթ, քու բյանբախտությանը սյատճառը ես ըմ, պա ես քյեզ հո՞ւնց թողիմ քյինիմ, քյըղանա մին պեն ըմ խընթրըմ, վեր տու թողիս, լոխ էլ կըդո̄ւդի, ամմա դե ո̈ւրթո̄ւմ ըմ օտըմ՝ հինչ վեր անիմ, էլ քյեզ ծախիմ վեչ, կրնդ ինձ իրեք օր հո̄քյմը տո, հինչ վեր օզիմ, անիմ, մունք լա̈վ հըրուստանանք, տու էլ մայա կըփըռնիս, թա̈զա̈ կըհուրուստանանք, համ էլ քյեզ հինչ վեր ասիմ, ինգի սյիտի անիս, ինձ քյոմա̈գյ ինիս, ընդրանավ էլ մինչև իրեք-հենգյ օրը մունք կըհուրուստանանք»։ Մարթը մըտածըմ ա, մըտածըմ, կընգանը հըվատըմ, թա ասըմ ա. «Դե վեր էտքան տու գյո̄ւդո̈ւմ ըս, ըրա տըեսնամ հինչ բիդի անիս»։

Էս մարթին կընեգը համ շահիլ ա իլալ, համ էլ դաշանգ։ Էքյսը եր ա կենըմ մին լավ հաքվըմ, տանան տուս կյամ քյինըմ խազնադարին կոշտը։ Խազնադարն էս կընգանը տըսնալավ, խելքը օզըմ ա թա կուրցընե։ Էս կընեգն ասըմ ա. «Օզըմ ըմ քյըզնըհետ մին զըրազ տեղ պատառ զուրոց անիմ, չունքյի տու բիդի էս կոր-ծը գյիդաս»։ Խազնադարը եր ա կենըմ տուս կյամ, քյընամ ըն մին զըրազ տեղ նըստըմ։ Էս կընեգն ասըմ ա. «Կոշտտ մին մըսլըհա-թու ըմ եկալ, ինձ մին մարթ ա իլալ, առե իտի քյըզնըման, քու բո-յին, ինքյն էլ ա իլալ խազնադար, հես ա տասսը տարե ա՝ քյեցած զարիբոթուն, մըհենգ խաբար ա եկալ, վըեր մեռալ ա, ես օզըմ ըմ մարթու քյինիմ, ամմա դե մին դեր էլ կա, մին քյոխա էլ, հեն ըն հետս կըտրած, իննադու ընգած։ Քյոխան ասըմ ա, վեր ես զուլ-լուղավ մրեծ ըմ, ես ըմ տընելու, դերն ասըմ ա՝ ես ասծու ծառան ըմ, ես ըմ տընելու։ Դուզն ասած ես էլ վեչ մինին ընդրանց անա օզըմ չըմ քյինիմ, ես կօզիմ քյեզ կյամ, չունքյի տու համ մարթիս նըման ըս, համ էլ քու փեշակտ մարթիս փըշական ա»։

Էս խազնադարը վեր լսըմ ա էս կընդանը խոսելը, յրան հուրու-մալագ ա ինրմ, ասըմ ա. «Պա ես հեն ըմ քյըզերա պըլացած, պա կըթողի՞մ, վըեր ըտրանք քյըզանա մուտանան, ես խազնադար ինիլավ ըտրանք հինչ ը՞ն, վեր իմ ըռըչիս ծըպտան, դե վեր մինը դուլըզավ ա մրեծ, մինն էլ ասծու ծառան ա, ես էլ փողավ ըմ զո-ռավ, քյեզ կըկյընհատինքյ, հու վըեր փողը շատ կըտա, ընդրան էլ կըքյինիս, վըեր առե լափ հարուր հաղզար էլ կյինտ պըցըրցնին, ես տըլական ըմ, արխային կաց, ուրանց ծերքան ինքյ օնիմ, թաքյ տու ռազի ինիս»։ Էս կընեգը թա. «Հոր ա՞, հոր ա՞, մըհենգ էքյուծ ուրուգյունը կյալու ըն մըեր տոն՝ կոշտըս, վըեր համ օտին-խըմին, համ էլ էտ խերը-շառը կըտըրին, տու ըս գյուդրմ, օզըմ ը՞ս տու էլ եք ուրանց քրշտեն վիրշըցրնինքյ, տու արխային կաց, ուրանք հիշքան էլ վեր փողը շատ տան, տու լափ շատ կըտաս, մին ա իլի, վերշըմը էտ փողը մերն ա իննականն»։ Խազնադարը ուրխընալան տուս ա օնըմ մին քանի հաղզար մանեթ տամ, թա ասըմ ա. «Դե կա քյինի տեսա-տենա առ, էքյուծ հըզըրե, ես էլ ըմ կյալու, հինչ հարկավեր ա, ընդրեղ կըտըրցնինքյ, փողեն շանը ինի սաղ»։

Էս կընեգը ըտըղան քյինըմ ա դերին կոշտը, կուտրատվե-լավ, ուրուրվելավ-տուրուրվելավ դերին էլ նաղը անըմ ինդի, հունց վեր խագնադարին։ Դերը վեր լըսըմ ա էս կընգանն ասածը, օզըմ ա թա օշան տանե, ամմա դե վախըմ ա, թա կընեգն ուրան քյինի վեչ, չունքյի մեծ ինիլան։ Էտ դարրըմը կընեգն ասըմ ա. «Պա

Ես օղըմ ըմ ըլը՜ա քյեղ կյամ, չո̈ւնքյի մարթը կընդանա̈ն հիշքան մըեծ ինի, լա̈վ կապըե, ջա̈հիլը հինչ ա՞, մին օր ըստըեղ, մին օր ընդըեղ, ուրերավ իսկի տոն էլ չի կյիլա̈կան, համ էլ իմ մարթս էլ ա ղեը իլա̈յ, տու էլ սո̈ւր-ըըփաթավ մարթիս նըման ըս, մը՜ենգյ թոլխան ասըմ ա՝ ես դոլլուղավ ըմ մըեծ, խաղնադարը թա ես՝ փողավ։ Մը՜ենգյ էքյո̈ւծ ուրո̈ւդյունը կյա̈լու ըն մեր տոն, օտին-խըմին, մին կյինա կըտըրըցնին, հու վըեր իվիլ տըվավ, ես էլ բիդի ընդըրան թյինիմ, մը՜ենգյ հիշքան կարիս, փողը շատ եր կալ, վըեր փողավ ընդըրանց որխնեն ճըղիս, հիշքան էլ ո̈ւրա̈նք իվիլ տան, տու ընդըրանց անա իվի՝ կըտաս, չո̈ւնքյի մըեր փողն ա իննա̈կան իլի, մին ա, ես թյեղ ըմ կյա̈լուս։ Դերն էլ ա տո̈ւս օնըմ մին քանի հազղար մանեթ, թա. «Կա, քյինի թաղարիքյ տես, էքյո̈ւծ ուրո̈ւդյուն ես էլ ըմ ծեր տանը»։

Էս կընեդյր դերին քըշտան տո̈ւս ա կյամ, քյինըմ քյոխեն կոշար, հինչ վեր ասալ ա խաղնադարին, դերին, ինդի էլ ասըմ ա թյոխեն, քյոխեն անա էլ մին քանի հաղղար մանեթ պուկում, կյամ տոն, մարթին, թա ասըմ ա. «Կա, էս քանի հաղզարը եր կալ հա̈լա̈, էքյո̈ւծ ըտրանա մին քանի մանեթ օտել-խըմելու կըտաս, վըեր դեըը, խաղնադարը, քյոխան կյըլական ըն հըրսանեքյս անին, լը՜ա̈ վեր նըստինըյ վախտը վըեր եկավ, էս փա̈րդա̈ն պեց ըրե, մին էլ նըհետ ըրե, տու տոոնը քըթակիս, հինչ վըեր հըրցընիմ, ջողաբըս թա̈լս կըտաս»։

Էտ օրեն էքյսը ո̈ւրո̈ւգյո̈ւնը դերը, քյոխան, խաղնադարը կյամ ըն էտ կընղանը տոնը, տըեսնըմ ըստոլը սարքած, ո̈ւրա̈նք ըստոլեն թըշտեն նըստոտըմ, դերը թա, ասըմ ա. «Ա՜ խալխը, մունք ըստեղ յոխ մին նըպատակավ ընք եկալ, եկեքյ էտ խերը-շառը կըտրինքյ, եռնան հաց օտինքյ»։ Լոխ էլ վեր ռաղի ըն կենըմ, խոսկը տամ ըն քյուխեն, քյոխան թա ասըմ ա. «Մունք էս կընգանը մո̈ւշտա̈րին ընք, էնքան լա̈վ ա, վեր մըեր մաշին մին շըլթաղ չի կա, լոխ էլ հունց վեր տըեսնըմ ընք, ընըմավեր մարթիքյ ընք, մըրզանա վըեշ կըոըեվ անող ա իննա̈կան, վըեշ մարթ ըսպանող, ամեն մինը ո̈ւրա̈ն պատիվն օնե, եկեքյ էս կործը խերավ կըտըրինքյ, էտ կընեգյը հո̈ւր կընգնե, ընդըրան էլ կըքյինի»։ Դերը թա ասըմ ա. «Շատ լա̈վ կինի, պա հունց կըտըրինքյ»։ Քյոխան թա ասըմ ա. «Պերինքյ չոփ քըցինքյ»։ Դերը թա ասըմ ա. «Չէ՛, ո̈ւրա̈ն անա հըրցընինքյ, հո̈ւրը օղե, ընդըրան էլ քյինի»։ Խաղնադարը թա ասըմ ա. «Չէ՛, վըեշ չոփ քըցինքյ, վըեշ ո̈ւրա̈ն անա հըրցնինքյ, պերինքյ էտ կընգանը կյինհատինքյ, հու վըեր շատ փող տա, էտ կը-

նեգը ընդրանը ինի, ես էտ կընեգը կյինհատըմ ըմ հազզար մանեթ, հասե իմ հազզար մանեթըս»։ Ասըմ ա, փողը ըստոլեն վըեր տինըմ։ Դերը թա. «Ես՝ էրկու հազզար մանեթ»։ Քյոխան թա. «Ես՝ իրեք հազզար»։ Խազնադարը թա. «Էս հենգ հազզար»։ Ուրուր եշիլավ, ուրուր աջուղու էտ կընդանան իննադի իլած հանց ա վըեր հանըմ ըն փողերը ըստոլեն վըեր ածըմ, տու կասիս խալալ ինի։ Կընեգը, վըեր տեսնըմ ա քյոխան ան դերը փող տալըմ տրժիրանըմ ըն, փարդան թաքուն պըցրհոփ ա անըմ, էտ դարըմը մարթը տոռնը թակըմ ա, կընեգը հըրցընըմ ա. «Հո վա՞»։ Մարթը թա. «Ա՛ կընեգ, ես ըմ, ես՝ քու մարթըտ, տոռնը պեց»։ Էս կընեգը թա, ասըմ ա. «Իմ մարթիս մըռնելին հես ա վեց տարե յա ընցալ»։ Մարթը կըզնըվըմ ա, թա. «Շոն շան քած, էտ հինչ ա՞, տու դուշմանին խոսկեն հըվըտացալ ըս, ինձ հըվատըմ չը՞ս, քու ըստինըտ, քու ընդինըտ, հես ա ես տոռնը կոտրիմ, տես քու կըլխես հինչ ըմ տինելու»։ Կընեգը թա. «Լավ ա, լավ ա, տոռնը կոտրել մե, հես ա պեց անիմ»։ Համ ասըմ ա, համ ծունդյներեն, կըլխեն թըխըմ, թա. «Վայ, մեզ կուտուրելու վա»։ Դերը, քյոխան, խազնադարը ահան սըրտաճանք ինիլան փողերը թողին ըստոլեն երան, ուրանք տանավը բուլդի կըտըրրմ, էլ վեչ կընգանը եշին, վեչ մարթին, ակուշկան պեց անին, փախճին, կընեգը տոռնը պեցի, մարթը նի մըննե, կընեգը համ ակուշկան կապե, համ էլ ծիծըղելավ Մարթին ասե թա. «Ա մարթ, դե հըվաքե էտ ըստոլեն յրա փողերը, տեսե՞ր կընգանը հինարը»։

Տանան դերը, քյոխան, խազնադարը վըեր փախճըմ ըն, ուրանք-ուրանք մընամ ըն զարմացած, վեր համ փողը քյընաց, համ էլ ուրանք մընացեն առանց կընեգ։ Կյամ ըն էտ տըռանը տակեն կըզնոտըմ, մըսլըհաթ անըմ։ Մարթն ան կընեգը վեր ըտրանց քըսփըսոցը լըսըմ ըն, լամբը հինգյըցնում ըն, անգուճ օնըմ, թա տեսնան հինչ ըն խոսըմ։ Խազնադարը թա ասըմ ա. «Օրիշ ճար չի կա, սա նամուս չի, եկեք որոշինք, վեր քշերըս էտ կընգանը թիրյաթիքյա անինք, կըտրան մին պատառ ծակինք, նոբաթավ քըշանանք ամեն մինը էտ կընգանը մին տեղան կըտըրե, ես ծըղանա ջահել ըմ, առաչ ինձ կըպեցեք, քյինդիրավ քըշըցրեք, աշկերը ես տուս տամ, վեր իրեք հետ հըմբարիմ, վերչըմն ասիմ փը՞րթ, ինձ ծեռաց կըպիրցըցընեք, ետավ քյոխան քըշանա ծերքեն մինը կըտըրե, ըտրան էլ տասը հետ հըմբարելը, մին փըրթ անելը. դե դերը պառավ ա, անջախ մինչև ծերքեն մինը կըտըրե, քառասուն հետ կըհըմբարե, մեհետ փըրթ անե, կըպիրցըցընինք»։

Հունց վեր ասում ըն, ինդի էլ անում ըն, քյինում ըն մին քյանդիր պիրում, տանը կտորը ըսկսում ծակելը։ Էտ մարթն ան կընեգյը լոխ լրսած ըն ինում, մարթը, թա ասում ա. «Ա՛ կընեգյ, քյընա կըրակ ը՛րա, իրեք հատ շամփուր տիր կըրակեն, թող կյըրմիրի, ամեն մինը լըհա վեր քըշանա, շամփուրավ բիդի դաղիմ»։ Մին պաատո վեր անց ա կենում, եշում ըն տրեսնում խաղնադարը կապած բրշանում ա։ Էս մարթը թա. «Ա՛ կընեգյ, շամփուրը պեր»։ Կընեգյը շամփուրը պիրում ա. էս մարթր կեծ շամփուրը վրեր կոխում ա մին փրրթ անում, ոլցըրցրնում ըն, ամմա դե վեչ դերին ա ասում, վեչ բյոխեն։ Քյանդիրը կապում ըն քյոխեն, քյոխան քըշանում ա։ Շամփուրը վրեր կոխում ըն, մինչև տասը հըմբարելը մեհեթ փըրթ ասելը իրեր հեա դադում ըն, քյոխան էլ չի ասում։ Պերում ըն դերին բրշրցնում, խաղնադարն ան քյոխան ուրանց ցավը մուռանում ըն, ըսկսում դերին անալ ծիծաղելը, թա էս վեր քյոխան մինչև տասը հըմբարելը իրեր հետ ա ծակալ, սյա դերը մինչև քառասունը հըմբարելը, մին հետ փըրթ անելը քանի՞ հետ ա ծկվելու։ Դերը լըհա՛ վեր բրշանում ա, շամփուրը վեր կոխում ըն, մինչև հենգյը էրկու հետ, մինչև օխտը իրեք հետ, մինչև տասը հենդյ հետ... Ճարը կրարում ա, շուտ-շուտ, թայդի-թայդի տասը-տասը, քսան-քըսան հըմբարում ա, տեսնում ա վեր ծիքյ չըն տամ, ախրը ճըղղամ ա, թա. «Արա՛, բառասունըմին տեղ փըրթ»։ Վերչը պըցըրցնում ըն, տեսնում էլ բշտե՞դ, դերըմը էլ հա՛յ չի մնացալ։

Խաղնադարը, դերը, քյոխան, իրեքն էլ շըմփուրավ դաղված, Լարան փոդերը խարջած, մըտածում ըն, թա հինչ անին։ Խաղնադարը թա ասում ա. «Ես կարել չըմ քյինիմ կյենդյատ անիմ, վեչ դյիդա՛ն, խաղնեն փոդերը տարալ ըմ ցըրբեվ տըվալ մին կընդա դա՛րդա՛, վերչրմն էլ շըմփուրավ էրվալ, ինձ հինչ կա՞սին»։ Քյոխան թա ասում ա. «Ես էլ չըմ կարել քյինիմ կյանդյատ անիմ, հու վրեր լրսե, ինձ ցա՛քյըմ կըտինի, թա տու քյոխա ինիլա՛վ իտի ախմախ պեն ըս փրոնալ»։ Դերն էլ թա. «Պա ե՞ս, ես կըկարի՞մ, վրեր բյինիմ կյենդյա՛տ, հիշտեղ էլ քյինիմ նադլ անիմ, մուրոքըս կրքանդին, փելոնըս հանին, ինձ բիյաբուռ անին, եկեքյ ի սեր ասծու, էս քյա՛լադյր մինակ մունք դյիդանք, մին քար կըլխեն տինինրյ, մինը տակեն, վրեչ մինին կոշտն էլ կյենդյա՛տ չի քյինանք»։ Հունցը վրեր ասում ըն, ինդի էլ անում ըն, վրեչ մին տրեղ էլ քյընամ չըն կյենդյա՛տ։